ԳՆՄԱՆ ՀԱՅՏ

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Բարեկարգում» տնօրինության կողմից հայտարարված Կենցաղային աղբի հավաքման ծառայության ձեռքբերման

1. **Գնման ընթացակարգը**

Գնումն իրականացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված «գնանշման հարցում» ընթացակարգով:

2. **Գնվելիք ծառայությունը**

Կենցաղային աղբի հավաքման ծառայություն

3. **Գնման ծառայության բնութագիրը**

Փարաքար համայնքի Փարաքար և Թաիրով գյուղերի աղբահանության կազմակերպում և աղբի տեղափոխում աղբավայր:

Բնակչություն – 8500

Աղբահանվող փողոցների երկարությունը- 60կմ

Առաջացող կենցաղային աղբի ծավալը մոտավոր հաշվարկներով տարեկան կազմում է 25000խմ:

Համայնքի սանիտարական մաքրման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է երկու տեսակի աղբատար մեքենաներ՝ հատուկ աղբահանության համար նախատեսված փակ թափքով բեռնատարներ և բաց թափքով ինքնաթափեր:

ԳՐԱՖԻԿԸ ԸՍՏ ՓՈՂՈՑՆԵՐԻ

Երևանյան,Մայրաքաղաքային, Վ.Մամիկոնյան, Մեքենագործ ների փողոցներում (այդ թվում նաև վերընշյալ փողոցներում գտնվող սննդի օբյեկտները և խանութները) ամեն օր (հատուկ աղբահանության համար նախատեսված փակ թափքով բեռնատարով):

Ի. Գասպարյան, Արարատյան, Դեմիրճյան թաղամաս, Նաիրի, Կոմունա, Խորհուրդներ, Մարտի 8, Ս. Հարության, Հ. Աբրահամյան, Ռ. Գասպարյան, Երվանդ Քոչար և հարակից փողոցներ՝ Սարյան, Իսահակյան, Ղ. Աղայան, Պարոնյան, Խորենացի, Տիգրան Մեծ փողոցները շաբաթական երկու անգամ, մյուս փողոցները շաբաթական մեկ անգամ:

Անկախ ուղերթների քանակի կատարողը պարտավոր է մաքուր պահել համայնքի փողոցները: Աղբահանության գրաֆիկը սահմանելիս համագործակցել պատվիրա- տուի հետ:

Կատարողը պետք է հավաքված աղբը միանգամից տեղափոխի աղբավայր, որի հետ պետք է ունենա կնքված պայմանագիր:

Յուրաքանչյուր աղբատար մեքենայի կազմում պետք է լինի մեկ վարորդ և երկու բանվոր:

Կատարողը պարտավոր է բնակիչների կողմից փողոցում տեղադրված աղբը (պոլիէթիլենային տոպրակներով,դույլերով, փակ տարաների մեջ) հավաքել և տեղափոխել աղբատար մեքենայի թափք՝ առանց բնակիչների մասնակցության:

Կատարողը պարտավորվում է անխափան կատարել գրաֆի կով նախատեսված ուղերթ- ները, խափանված մեքենա-ները վերանորոգել ժամանա-կին կամ փոխարինել նորերով, որպեսզի չխաթարվի գրաֆիկը, այլապես կենթարկվի տույժի:

Կատարողը պետք է յուրաքանչյուր օր, մինչև ժամը 11^{00}, ավարտած (մաքրած) լինի Երևանյանն Մայրաքաղաքային փողոցները: Անհրաժեշտության դեպքում, օրվա երկրորդ կեսից հետո, կրկին վերոնշյալ փողոցներում (Երևանյան, Մայրաքաղաքային) կատարել աղբահանություն:

Աղբահանության բանվորները պետք է կրեն միանման աշխատանքային հագուստ:

4. **Ձեռքբերման և վճարման պայմանները**

Վճարումն իրականացնել պայմանագրով նախատեսված ծառայությունը մատուցելուց հետո՝ երկկողմ ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

Պատասխանատու ստորաբաժանում՝

Փարաքար համայնքի «Բարեկարգում» տնօրինություն

11.05.2020թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՓՀԲՏ-ԳՀԾՁԲ-20/12» ծածկագրով Փարաքար համայնքի «Բարեկարգում» տնօրինության կարիքների համար Կենցաղային աղբի հավաքման ծառայության ձեռքբերման գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի երկրորդ նիստի

Գ.Փարաքար 19.05.2020թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սուքիասյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Օհանյանը, Ա.Աբալյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Վարդանյանը

1. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

Ընթացակարգը հայտարարվել է չկայացած՝ ոչ մի հայտ չէր ներկայացվել:

Չ/Հ	Գնման առարկայի համառոտ նկարագրությունն	Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝ այդպիսիք լինելու դեպքում	Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝ "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի /ընդգծել համապատասխան տողը/	Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն
1	Կենցաղային աղբի հավաքման ծառայության ձեռքբերում	-	1-ին կետի 2-րդ կետի 3-րդ կետի 4-րդ կետի	Ոչ մի հայտ չի ներկայացվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի Նախագահ՝ Ա.Սուքիասյան

Անդամներ Ս.Օհանյան

Ա.Աբալյան

Քարտուղար՝ Ա.Վարդանյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

Ընթացակարգի ծածկագիրը ***«ՓՀԲՏ-ԳՀԾՁԲ-20/12»***

Փարաքար համայնքի «Բարեկարգում» տնօրինությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Կենցաղային աղբի հավաքման ծառայության ձեռքբերման նպատակով *«ՓՀԲՏ-ԳՀԾՁԲ-20/12»* ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը՝

Չ/Հ	Գնման առարկայի համառոտ նկարագրություն	Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝ այդպիսիք լինելու դեպքում	Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝ "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի /ընդգծել համապատասխան տողը/	Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն
1	Կենցաղային աղբի հավաքման ծառայության ձեռքբերում	-	1-ին կետի 2-րդ կետի 3-րդ կետի 4-րդ կետի	Ոչ մի հայտ չի ներկայացվել

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՓՀԲՏ-ԳՀԾՁԲ-20/12» ծածկագրով գնումների համակարգող Ա.Վարդանյանին:

Հեռախոս՝ 099 883 773

Էլեկտրանային փոստ՝ vardanyananahit1011@gmail.com

Պատվիրատու՝ «Բարեկարգում» տնօրինություն

19.05.2020թ.